




ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

ՅԱՂԱԳՍ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԼՈՒՍԱԿԱՌՈՅՑ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՆ ԷԶՄԻԱԾՆԻ

«Ի վերայ Աշոյն և Էջմիածնի ամենայն
ազգն հայոց կապեալ կան»:

ԱՌԱՔԵԼ ԳԱՎՐԻԺԵՑԻ

Հայրապետական սրբատառ կոնդակի հրահանգով մայիս ամսվա մեջ ոգեկոչվեց անունն ու գործը և հիշատակը Մայր Աթոռի միաբան, հայրենասեր պատմագիր ու «վիպասան» Առաքել վարդապետ Դավրիժեցու, նրա մահվան 300-ամյակի առիթով (1670—1970):

Դավրիժեցին Ժէ դարի Մայր Աթոռի «Երեւելի, քաջ գիտուն և հմուտ», հավատալի ու լուսամիտ վարդապետներից մեկն էր, որը «յողորմելի ծերութեան» հասակում, «ցաւագար մարմնով», 1651—1662 թվականներին, Երևանի ա. Կաթողիկէ եկեղեցու հովանու տակ, Տ. Փիլիպպոս Աղբակեցի և ապա Տ. Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսների օրհնությամբ և թելադրությամբ, գրի է առել իր պատմությունը, «կսկծալի մորմոքմամբ սրբտի, տեսանելով զաւերս Հայաստան աշխարհին, զնուագիլն մերոյս ազգին և զսարսալիս մահմետականաց, զպակասիլն եկեղեցական կարգաց, զաւերն բարձրագան և քրիստոսաբնակ Աթոռոյն սրբոյ Էջմիածնի, այլ և զնոցին նորոգութիւն և այլ բանքս

պատմութեանց ի գիրս, յիշատակի, ի գիտութիւն յապալ եկելոց»¹:

Դավրիժեցու պատմությունը, որ բովանդակում է 60 տարվա մի շրջան, 1602—1662, «մի համազգային վկայաբանություն և նահատակություն է»², և միաժամանակ ա. Էջմիածնի խոստումնալից ու խանդավառ վերածննդյան ու հալ կյանքի մտալոր վերակենդանության օրհներգությունը:

Սույն հոդվածի վերնագիրը՝ **Էջմիածնի լուսակառույց սուրբ Աթոռի նորոգության մասին**, վերցվել է Դավրիժեցու պատմության ԻԴ գլխի վերտառությունից³:

1441 թվականին հայրապետական Աթոռի իր պատմական բնիկ վայրը՝ ա. Էջմիածին փոխադրվելուց հետո, 1460—1620 թվականները, հանդիսացան մեր եկեղեցու

¹ Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ. Վաղարշապատ, 1896, էջ 667—669:

² Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, Երևան, 1946, էջ 449:

³ Առ. Դավրիժեցի, նույնը, էջ 284—313:

պատմության ամենամուսույն և անկյալ շրջանները, մեր երկրում տիրող քաղաքական, տնտեսական դաժան պայմանների բերումով:

Այդ ժամանակահատվածում մեր եկեղեցին և ժողովուրդը դառնորեն հեծում էին պարսկական և օսմանյան մահմեդական ծանր լծի տակ: Մեր երկիրը թատերաբեմ էր հանդիսացել երկու մրցակից պետությունների միջև հաճախակի մղված ավերիչ պատերազմների, որոնց ընթացքում ավերակ էին դարձել մեր շեն քաղաքներն ու ավանները, ամալացել՝ հայ մշակույթի պաշտոն և հույակապ կենտրոնները՝ վանքերը, կողոպտվել՝ փարթամ եկեղեցիները և գերեվարվել՝ հայ ժողովուրդը: Այդ ծանր, ողբերգական տարիներին Մայր Աթոռ ս. Էջմիածինը հավասարապես բաժանում էր իր հարազատ ժողովրդի ցավն ու տառապանքը. Էջմիածինը նույնպես կողոպտվում է, քանդվում և անշքանում:

Աղետն ու անկումը իրենց գազաթանկե տին են հասնում շահաբաշյան բռնազաղթի հետևանքով 1603—1620 թվականներին: «Այս վերջին ավերմունքը վերջին հարվածն է տալիս հայոց հին քաղաքակրթության, որ արդեն նվազած էր շատ»⁴:

Բայց այս անգամ էլ հայ եկեղեցին և մեր ժողովուրդը իրենց հոգում գտնում են կենսունակության և կենդանության անթելված, անապատ ուժեր ու ոտքի են կանգնում՝ նոր հառաջդիմության գաղափարով տոգորված:

ԺԷ դարի 20-ական թվականներին էլ սկիզբ է առնում հայոց աշխարհի՝ ս. Էջմիածնի հովանու և օրհնության ներքո, եկեղեցական, հոգևոր, մշակութային ու հայրենասիրական վերակենդանության խոստումնալից ժամանակաշրջանը, մեծ լուսավորիչ վարդապետների արտագին ջանքերով:

Դավրիժեցին, ժամանակակից և ականավոր պատմիչը, դառնությամբ է հաստատում այդ ժամանակի հոգևորականության կյանքում տիրող տխուր ու անկյալ բարքերը, տգիտությունը, հոգևոր, մտավոր անկումը, որպես հետևանք ժամանակի օտար բռնակալությունների ծանր քաղաքական և տրեստական ճնշման:

Հոգևորականներից շատերը և հասարակ ժողովուրդը «ոչ զգիրս գիտեին և զգործին գրոց», որովհետև ընդհանրապես «տգիտությամբ խուսանացեալ և կորդացեալ էր ազգս հայոց»⁵:

Եկավ մի պահ, երբ պետք էր, սակայն, ի գին ամեն զոհողության, փրկել հայ եկեղեցին և ժողովրդին ու նաև մեր դարավոր

մշակույթը: Ահա օրվա հրամայականը, որ ծանր մղձավանջի նման ճնշում էր ժամանակի կրթված ու հայրենասեր վանականների մտքերը: Ու հրապարակ իջան տեսիլք ու հավատք ունեցող հոգևորականներ, լուսամիտ ու ժողովրդանվեր հոգիներ՝ վերակենդանացնելու համար նախ հայ եկեղեցին և ապա եկեղեցու միջոցով՝ հայ ժողովրդի հոգևոր, մտավոր կյանքը:

Սույն վերակենդանության հիմնական օջախները հանդիսացան նորից հայ վանքերը, ինչպես եղել էր միշտ անցյալում:

Եվ ահա մեծ թափով սկսվում է որպես ամուր հիմք և խարիսխ վերածնության, հին վանքերի վերանորոգությունը, և նորերի շինությունը: Վանքերը հանդիսանում են հուսալից հենարանները ԺԷ դարի մեր վերադարձին:

Այս մասին Մանուկ Աբեղյանը նշում է. «Վանքերը կենդանանալով՝ կենդանություն և թարմ հոսանք են մտցնում ժողովրդի թրմության մեջ: Զարթնում է նոր ուժով կրոնական ոգին: ...Մեր վանքերը մի անգամ էլ կատարում են իրենց պատմական քաղաքակրթության դերը, որ ունեցել էին Ժ դարում:

Հնի մեռելության մեջ վերածնությունն առաջ են բերում ո՛չ թե Մխիթար Աբբան և Մխիթարյանները»⁶ (ընդգծումը՝ Ա. Հ.), այլ՝ հայ ժողովրդի ծոցից ծնած, նրա վիշտն ու տառապանքը հարազատորեն բաժանած՝ Հայաստանում ապրող ու գործող մի խումբ վանականներ, որպես լուսավորիչներ և վերանորոգիչներ:

«Տառապանքների մրրկած ծովի մեջ ծփացող հայ ժողովուրդը,—նշում է Լեոն,— իր դժբախտ պատմության բերումով, ուրիշ առաջնորդ ու հավատարմատար չունեի, բացի հոգևորականությունից: Թե ինչ նշանակություն ունեի մանավանդ հայոց ընդհանրական Աթոռ Էջմիածինը... Առաքել Դավրիժեցին, անշուշտ, իր ժամանակի ընդհանուր հայկական ազգային դավանանքն է արտահայտում, ասելով. «Քանզի ի վերայ Աջոյն (Լուսաորչի) և Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ»: Ուստի և շատ կարևոր է այն հարցը, թե շահաբաշյան սարսափների այս սև տարիներում ինչ էր ներկայացնում հայ հոգևորականությունն իբրև բարոյական ուժ, իբրև անսահման հեղինակության տեր մի առաջնորդ, որ պիտի ազդու դեր ունենար ժողովրդի կրած անհուն տանջանքների մեղմացման մեջ»⁷: (Ընդգրծումը՝ Ա. Հ.):

⁴ Մ. Աբեղյան, նույնը, էջ 438—439:

⁷ Լեո, Հայոց պատմություն, հատոր Գ, Երևան, 1946, էջ 266:

¹ Մ. Աբեղյան, նույնը, էջ 437:

² Առ. Դավրիժեցի, նույնը, էջ 255:

Այս անգամ ևս հավատալոր ու հայրենանվեր հայ վանականությունը կատարեց իր փրկարար և քաղաքակրթիչ դերը հայ կյանքում:

Ժամանակի լուսավորիչների, վերանորոգիչների մեջ հիշվում են, ըստ Դավրիժեցու.

Սրապիոն վրդ. Եղեսացի, տիեզերալույս վարդապետը. ապա կաթողիկոս, Գրիգոր ԺԳ անունով, որն իր սեփական միջոցներով վճարեց Մայր Աթոռի պարտքը և սկիզբ դրեց նրա «նորոգության» (1601—1603): Դավրիժեցու պատմության Բ և Գ գլուխները նվիրվել են Սրապիոն Եղեսացու կյանքին ու լուսավոր գործունեությանը (Տես նաև Հր. Աճառյան, Հայոց անձնանունների քառաբան, հատոր Դ, էջ 680):

Սարգիս եպս. Պարոնտեր-Ամբերդցի⁸.

Կիրակոս քհն. Տրապիզոնցի⁹, որոնք հանդիսացան հիմնադիրները Սյունյաց Անապատի՝ Տաթևի հին վանքի մոտ, «որը եղև սկիզբն շինելոյ և հաստատելոյ անապատաց»:

Գրիգոր Կեսարացի, «այր գիտուն և բանիբուն»¹⁰, «պարկեշտ և սրբակրօն վարուք, պահեցող» մեծ հոգևորականը, ապա պատրիարք Կ. Պոլսի, աշակերտը՝ Սրապիոն Եղեսացու.

Պողոս վրդ. Մոկացի, որը վանական կրթական մեծ գործունեություն ծավալեց Ծոռոթի և Աստապատի վանքերում: Դավրիժեցին մի ամբողջ գլուխ է նվիրել նրան, իր պատմության մեջ: Ընկերն ու գաղտնիարակիցը Մովսես Սյունեցու.

Ներսես վրդ. Մոկացի. Ամրտոլու և Հարանց վանքի աշակերտ և ապա հիմնադիրը Լիմ անապատի (Վասպուրական).

Մելքիսեդեկ վրդ. Երևանցի, Վժան գլուհից. աշակերտ Մոկացու: Գործեց Հարանց վանքում, Լիմ անապատում: Երկար ժամանակ էջմիածնի վանքում դասախոսեց քերականություն և փիլիսոփայություն: (Աճառյան, հատոր Գ, էջ 306):

Մովսես վրդ. Սյունեցի, ապա կաթողիկոս Մովսես Գ Տաթևացի անունով, որոնք ըստ Դավրիժեցու հանդիսացան ԺԷ դարում հիմնադիրներն ու սկզբնավորողները «Անապատի և կրօնատրական կարգաց», «որովք և պատճառ՝ ամենայն բարեկարգութեան վանօրէից և եկեղեցեաց և նոցին բնակողաց»:

Դավրիժեցին իր պատմության մեջ մասնավոր գլուխներ է նվիրել Մայր Աթոռի եր-

կու մեծագործ հայրապետների՝ Մովսես Գ Տաթևացու, Փիլիպպոս Ա Աղբակեցու, ինչպես նաև Սարգիս եպիսկոպոսի, Կիրակոս քահանայի և Պողոս վարդապետ Մոկացու գործունեությանը¹¹:

ԺԷ դարում հայ վերածնության օջախներ հանդիսացան Սյունյաց մեծ Անապատը կամ Հարանց վանքը, Նոր Զուղայի Ամենավերքիչը, Սաղմոսավանքը և մանավանդ Էջմիածինը, որը որպես մնայուն կենտրոն և հոգևոր վերին գլուխ ղեկավարում և առաջնորդում էր վերանորոգչական լուսավորական այդ մեծ շարժումը: Փակվում է հայ եկեղեցու պատմության սև էջը և սկսվում է լուսավորության շրջանը: Խավար դարերին հաջորդում են գիտության և հատաչիսության դարերը:

ԺԷ դարում, Մայր Աթոռի, հայ եկեղեցու և վանքերի արմատական «նորոգության» գործը, սակայն, սերտորեն կապվում է Մովսես Գ Տաթևացու անվան և գործունեության հետ¹²:

Այդ «նորոգությունը» կամ վերագարթոնքը շարունակվում է Փիլիպպոս Աղբակեցի և Հակոբ Դ Զուղայեցի կաթողիկոսների գահակալության տարիներին՝ հասնելով խանդավառ ու մնայուն իրագործումների:

Ստորև ներկայացվում է Մայր Աթոռի երեք մեծ հայրապետների գործունեության համառոտ պատկերը, ըստ Դավրիժեցու, Սիմեոն Երևանցու և Օրմանյան սրբազանի:

ՄՈՎՍԵՍ Գ ՏԱԹԵՎԱՅԻ (1629—1632)

Մովսես Տաթևացին ծնվել է ԺԶ դարի 80-ական թվականներին Սյունյաց աշխարհի Բաղք գավառի Խոտանան գյուղում, այժմ Աճոնան: Նախնական կրթությունը ստացել է Սրապիոն Եղեսացի մեծ վարդապետի և կաթողիկոսի մոտ¹³ և ապա նրա աշակերտ, «ծիր ու գործունյա» Գրիգոր Կեսարացու մոտ:

Եղեսացին վաղ վախճանվելով, Մովսեսի կրթության և դաստիարակության գործը հանձնում է Գրիգոր Կեսարացուն: 15 տարեկան հասակում Մովսեսը կուսակրոն քահանա է ձեռնադրվում Կեսարացուց և ապա նույնպես նրանից է ստանում վարդապետական աստիճանը «մեծ հանդեսով» Կ. Պոլսում, նրա պատրիարքության օրով: Տաթևացին ապա գնում է Երուսաղեմ՝ «յուխտ և

⁸ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների քառաբան, հատոր Գ, էջ 456:

⁹ Նույն տեղ: Նաև Առ. Դավրիժեցի, նույնը, էջ 249—260:

¹⁰ Հր. Աճառյան, նույնը, հատոր Ա, էջ 624:

¹¹ Առ. Դավրիժեցի, նույնը, գլ. ԻԱ, ԻԲ, ԻԳ, ԻԴ, ԻԵ:

¹² Նույնը, գլ. ԻԲ, ԻԶ:

¹³ Մաղ. արքեպ. Օրմանյան, Ազգապատում, հատոր Բ, էջ 2318:

լերկրագոյութիւն տնօրինական տեղեացն», անցնում՝ Եգիպտոս՝ «շրջեալ յամենայն վանօրայս» ուսումնասիրելու համար վանական տիպար կյանքը և, «զկարգաւորութիւն ամենայն իրաց, ժամատեղեաց, սեղանատեղեաց, զգեստուց և խցակցութեան և կրօնական ժուժկալութեան և այլ ամենայն գործոց»¹⁴, հետագայում, «վասն ապագայից ժամանակաց», նույն ձևով վանական կազմակերպութիւն ստեղծելու համար Հայաստանում:

ճայն եկեղեցիս զԱւետարանն Քրիստոսի վնիտ և պաշտօտ քարոզութեամբ վասն փրկութեան աշխարհիս հայոց և ի պաշտառութիւն եկեղեցեաց:

Ժողովուրդը, որ կարիքն ուներ հոգևոր խոսքի, հավատի ու հայրենասիրության քարոզի ու մխիթարության, «խնդրութեամբ արտի» ընդունում էին այդ բոցավառ խոսքերն ու պատգամները և «յօժարութեամբ կատարեին»:

Սյունեցին քարոզելով, մխիթարելով ժո-



Մի մասունք Առաքել վրդ. Դավրիժեցուց (աստղագործ վակաս, XVII դար)

1606 թվականին Մովսես Սյունեցին Երուսաղեմում հանդիպում է ժամանակի Հայաստանից ուխտի եկած երկու մեծ այլ վերանորոգիչների՝ Սաղմոսավանքի առաջնորդ Սարգիս եպս. Պարոնտեր-Ամբերդցուն և Կիրակոս Տրապիզոնցուն, որոնք նույնպես հայ եկեղեցու վերածնությունը արդարորեն կապում էին Հայաստանում կազմակերպված, տիպար վանականության պատրաստության և գործունեության հետ:

Երեք մեծ լուսավորիչները Երուսաղեմում ուխտում են վերադառնալ Հայաստան ու միասիրտ նվիրվել իրենց ժողովրդի հոգևոր ու մտավոր դաստիարակության գործին:

Սաղմոսական և Արևմտյան ու Արևելյան Հայաստանի պատմական վանքերի ուխտագնացություններից վերադառնալով հոգեպես բավարարված և պատրաստ՝ իր մեծ առաքելությանն ու կոչմանը, Մովսես Սյունեցին քայլ առ քայլ թափառում է աշխարհին հայոց, որ խախտվել էր «քարեկարգութիւն ի վերին աշխարհէս հայոց և փոխանակ նորա արձանացեալ և արմատացեալ էր անկարգութիւնն»։ քարոզում, մխիթարում, պատգամում՝ մեր հոգևոր ու մտավոր զարթոնքի անհրաժեշտությունը, սրափնելու «ի ննչմանէ ծանրութեան, ամենազգաստ արթնութեամբ, հոգեկորոզ գուարթութեամբ» (Գրիգոր Նարեկացի): Դավրիժեցին վկայում է, որ Սյունեցին «անխափան քարոզէր յամեն-

դովրդին, այցելում է Կ. Պոլիս, Տիգրանակերտ, Վան, Դավրիզ, հասնում՝ Սյունյաց աշխարհը, Տաթևի հին վանքի մոտ մեծ Անապատ, կամ Հարանց վանք, որ իրենից առաջ եկել-հաստատվել ու իրենց կրթական-վանական մեծ առաքելությունն էին սկսել 1608 թվականին Սարգիս Պարոնտերն ու Կիրակոս Տրապիզոնցին՝ բազմաթիվ աշակերտներով և վանականներով միաբանություն կազմած:

Դավրիժեցին իր պատմության ԻԱ և ԻԲ գլուխները նվիրել է մեծ Անապատի և նրա վարդապետների գործունեությանը: Դավրիժեցին հարազատորեն ներկայացրել է մեծ Անապատի վանական, առանձնական կյանքը, կրոնավորական կենցաղը, «ծածուկ առաքինությունս», ժամակարգության, աղոթքի և աշխատանքի կարգը, կրոնավորական զգեստի ձևը: «Շատ գորավոր էր ճգնավորական կյանքը... գործնական կյանքն ալ խնամքով մշակված, մանավանդ ուսմամբ ու քարոզությամբ և ժողովուրդի հոգածությամբ, որուն համար նոր ճյուղեր ալ կհաստատեին»: (Օրմանյան, Ազգ. Բ, էջ 2248):

Մեծ Անապատում եռամեծ երեք հոգեվորականները խանդավառորեն նվիրվում են իրենց վերանորոգչական մեծ գործին: Մովսես Սյունեցին երկար տարիներ գործելով Տաթևում, կոչվում է նաև Տաթևացի:

Սյունեցին միաժամանակ, հաճախ ուսումնա-դաստիարակչական գործից բացի, նրվիրվում է նաև ժողովրդական քարոզչության

¹⁴ Առ. Դավրիժեցի, նույնը, էջ 285:

աշխատանքներին: Նա Պողոս Մոկացի վարդապետի հետ, որպես մտերիմ, գաղափարակից ընկեր՝ «իբրև գտորբ առաքելայն Պետրոս և Պողոս, լեալք ամուլք հաատուլ», առաքելաբար, հետիոտն շրջագայում են ողջ աշխարհը հայոց՝ որպես ճշմարիտ սերմնաշաղկեր հավատի, լույսի և գիտության. «քացաններ հավատի, լույսի և գիտության, շինելն լողելին ամենեցուն զճշմարտութիւն, շինելն զեկեղեցիս, կարգելն քահանայս, հաստատելն, ուսուցանելն մանկունս»¹⁵, եկեղեցու և ժողովրդի համար պատրաստում՝ ուսումնասեր և արժանավոր հովիվներ ու մշակներ:

Երկու լուսավորիչների հոգեբուխ քարոզության, քարեկրոն վարքի ու կենցաղավարության և «ուղիղ վարդապետութեան» բարի համբավը տարածվում է ժողովրդի լայն խավերի մեջ:

Ժողովուրդը մեծ հույսեր է կապում երկու վարդապետների վերանորոգչական, քարոզչական գործունեության հետ և քարոջապես ու նյութապես օգնում նրանց եկեղեցաշեն, կրթանվեր ձեռնարկների հաջողության համար:

Սյունեցիներ Երևանի ժողովրդի սրտատույ դիմումների վրա, հանձն է առնում տեղի ս. Անանիա առաքյալի անսպառի վանահայրությունը, ժողովրդի ինքնաբերական և քարոջապետական գործունեության վանքը իր հարակից շենքերով, դպրատուն է բացում, միաբանություն է հաստատում, և նրա շինարար գործունեության խանդավառ իրագործումներն իրեն են կապում ողջ հայության սիրտն ու զգացումները: Սյունեցիներ Երևանի ս. Անանիա վանքին տալիս է «կատարելապես մեծ Անապատի ձևը, կրոնավորական բարեկարգ միաբանություն կազմած»¹⁶:

Սյունեցիներ Անանիայի վանքում եպիսկոպոս է ձեռնադրվում և, ընդառաջելով նորջողայեցիների բուռն ցանկությանը, մեկնում է Զուղա՝ միսթարեղու համար բռնությամբ գաղթեցված հայ ժողովրդի տարագիր բեկորներին, որոնք մաշվում էին հայրենիքի կարոտով և ս. Էջմիածնի սիրով:

«Ազգ և ժողովուրդ մեր խլեալք տեղեաց և անջատեալք ի հայրենի և ի բնիկ ժառանգութեանց, յօրհնեալն յերկրէ, որ լի էր նըշխարօք սրբոց, ոռոգեալ արեամբ վկայից»:
(Դավրիժեցի):

Սյունեցիներ այցելում է Պարսկաստանի հեռավոր գաղթօջախները, քարոզում, հուսադրում, ափսիում ու մխիթարում, որ հիշեն ամենայն քարության լի հայոց աշխարհը և մանավանդ չմոռանան «մեծահանդէս Աթոռն ս. Էջմիածնի»:

Սյունեցիներ Պարսկաստանում եղած ժամանակ ձեռք է բերում նաև արքունի և պետական բարձրաստիճանի պաշտոնատարների վստահությունն ու համակրանքը և 1627 թվականի ամռանը արքունի հրովարտակով «թագաւորական նոմոսի» նշանակվում է ս. Էջմիածնի ավերակ տաճարի փակակալ, լուսարարապետ:

1627 թվականից մինչև 1632 թվականը Մովսես Սյունեցու կյանքն ու գործունեությունը և անխզելիորեն կապվում է Մայր Աթոռի վերանորոգության մեծ ձեռնարկի հետ:

Դավրիժեցիներ պայծառ լավատեսությամբ, սրտատույ հավատով պատմել է Մայր Աթոռի հոգևոր, մշակութային, վանական-շինարարական վերագարթոնքը, որին մեծ սիրով և սրտատույ անհամբերությամբ սպասում էին բոլոր հայերը¹⁷:

Երկար տարիների տխուր դեպքերից հետո, գրում է պատմիչը, վերջապես աստվածային մասնավոր նախախնամությամբ, որովհետև «աստվածային կամքը քաղցրացել էր» դեպի ս. Էջմիածինն ու հայ ժողովուրդը, և ժամանակի մի խումբ լուսավորիչ, հայրենանվեր ու ժողովրդասեր վարդապետների ջանքերով սկիզբ է առնում վերագարթոնքը: «Շինարարությունն ու վերանորոգությունը» Մայր Աթոռում, սկսվեցին 1627 թվականին, Վարդավաթի պահքի երկուշաբթի:

Մեծ պատմիչը սրտի մորմոքով նախ նրկարագրում է ահավորությունն ու մեծությունը «աւերածութեան եկեղեցեաց և հայրենեաց», և շեշտում, որ ընթերցողը լսել է մեծ «նորոգութեան» մասին, «քայց չգիտես թե ինչպիսին էր ավերածությունը, և դրա համար էլ ստիպված եմ գրել ավերվածության մասին, որով և (այն) ցավն ու կսկիծը, որ ունեին ամբողջ հայ ժողովուրդը և ժամանակի վարդապետները սուրբ Աթոռի մասին... ուր կան սրբերի դամբարաններ, և մանավանդ՝ մեծահանդէս սուրբ Աթոռ Էջմիածինը, ուր գտնվում է Գրիգոր Լուսավորչի սուրբ Աջը, որով օրհնվում է սուրբ մեռոնը և որտեղից զնալով սփռվում է հայ ժողովրդի մեջ ամբողջ աշխարհում՝ ուր էլ լինեն. դրա համար ամբողջ հայ ժողովուրդը հնազանդվում է Էջմիածնի սուրբ Աթոռին և այնտեղ նստած իր կաթողիկոսին... որովհետև ամբողջ հայ ժողովուրդը Աջին և Էջմիածնին է կապված»¹⁸:

Շահ-Աբասի հրամանով 1614 թվականին Մայր տաճարի կառույցից 15 նշանավոր քարեր բռնի հանված ու տարված էին Սպահան, այնտեղ նոր մի Էջմիածին շինելու դիվանի նպատակով:

¹⁵ Առ. Դավրիժեցի, նույնը, էջ 291:

¹⁶ Օրմանյան, նույնը, էջ 2364:

¹⁷ Առ. Դավրիժեցի, նույնը, էջ 667:

¹⁸ Առ. Դավրիժեցի, նույնը, էջ 199:

Տխուր էր շատ Էջմիածնի վիճակը: «Աստվածաբանակ սուրբ Աթոռը ամբողջովին պարպված էր ունեցվածքից և կողոպտված՝ գարդերից. գիրք իսկ չկար, որովհետև այնտեղ ժամասացություն չէր լինում. զգեստ ու շորջատ չկար, որովհետև ժամերգություն և պատարագ չէր կատարվում. մինչև իսկ Քրիստոսի Իջման տեղը և սուրբ Սեղանը ծածկոց չունեին. չկային կանթեղներ... խրկ-կարկություն չէր արվում, որովհետև խուճկ ու բուրվատ չկար... եկեղեցու սպառնալիք քարոքանդ եղած՝ գեղունների և սողունների որջ էր դարձել «ծոտովք, ծղովք և այլ գոեխովք» լցված: Դրսի կողմից կաթողիկեի գլուխը, ամբողջ տանիքը և պատերի երեսները քանդված էին... եկեղեցու շուրջը աղբակույթում ու հողը յուր կանգուն բարձրացել էին և ծածկել հիմքերը...» (Դավրիժեցի):

Մովսես Սյունեցին «նորոգության գործը սկսում է Մայր տաճարի ընդարձակ բակի բարեկարգությամբ: «Շուրջանակի բլրացած հողի և մոխրի կույտերը վերացվեցին»։ Քասաղ գետի «հորդ և վարարած ջուրը բերեցին, կապեցին հողի կողմը և շատ մշակների գործի դրեցին, որոնք սկսեցին փորել հողը և տրորել ջրի մեջ. և այսպես անելով, ջուրն առավ տարավ հողը... քիչ օրեր հետո բոլոր կողմերից հողը շուտով վերացավ, ամբողջ տեղը բացվեց, գետից հարթվեց և մնացած քարերը շարվեցին կառույցի պատերին»:

Այս բարեկարգման աշխատանքից հետո շինարար Տաթևացին վանքի շուրջը «լայն ու ընդարձակ պարիսպ» բաշել տվեց, «նրա մեջ կառուցելով ութ բուրգեր: Եվ ապա պարսպից ներս՝ արևմտյան կողմում շինեցին դարպասներ և խցեր «ի բնակություն միաբանից» և տներ՝ «հյուրերի կարիքների համար»։ և ապա հարավային կողմում՝ սեղանատուն, փուռ, տնտեսատուն, շտեմարան: Առանձին խնամքով և հիմնովին վերանորոգվում են Մայր տաճարի տանիքն ու կաթողիկեն, որով տաճարը ստանում է իր նախկին վեհաշուք տեսքը:

Այնուհետև, նյութական շինարարությունից հետո, մեծ վերանորոգիչ հայրապետը մտածում է մայրավանքի հոգևոր, բարոյական և մտավոր կյանքի շինության մասին: Շատ ճիշտ և գեղեցիկ արտահայտությամբ է խոսում Դավրիժեցին Մայր Աթոռում խախտված եկեղեցական կարգ ու կանոնի վերահաստատման մասին. «Օրեցօր նորոգվում, հաստատվում էր սուրբ Աթոռը, քրիստոնեական հավատի ամբողջ կանոնը»: Տաթևացին վանքը «պայծառացյոց միաբանության և վարդապետության, յարմար և հաստատուն

ժամակարգությամբ, փարթամացյոց եկեղեցին անօթով»¹⁹:

Լուսամիտ հայրապետը դպրոցներ բացեց, ս. Էջմիածինը նորից դարձավ «բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ», որին դիմում էին աշակերտական մեծ խմբեր «ի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհի, յորդեալք և դողեալք, քանզի յԱյրարատեան գաւառին բոլեցին հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ»²⁰:

Տաթևացին «Հովհաննավանքի մեծափառ սուրբ ուխտատեղիում դպրատուն հաստատեց», որ հավաքեց ուսումնաստենչ հայ երեխաներին՝ հայ եկեղեցու ապագա սպասավորության կանչվածներին և «բոլորի ծախսերն ու կարիքները ինքն էր հոգում, իսկ երեխաները խելամտորեն և անխափան եկեղեցական ուսում էին ստանում և Աստվածաշնչին ու իմաստասիրական գրքերին ծանոթանում»:

Լավ կազմակերպված ուսումնա-դաստիարակչական գործը, հայոց հայրապետի անմիջական հովանավորության և ղեկավարության ներքո տվեց իր բարի արդյունքները: Երեկվա անկազմակերպ ուսանողները դարձան եկեղեցու, Մայր Աթոռի, հայ մշակույթի արժանավոր սպասավորներն ու ժառանգորդները:

«Հոգեսեր եկեղեցականությունը աստ ու անդ վանքերու մեջ առանձնացված, կսկսին եկեղեցական բարեկարգության աշխատիլ, ժողովրդի բարոյականը բարձրացնել, ուսում տարածել, դպրոցներ բանալ»²¹:

Հայ եկեղեցու «նորոգության», հոգևորականության դերի և առաքելության բարձրացման ու մեր ժողովրդի հոգևոր, մտավոր ուսավորության ի նպաստ տարված մեծ գործի արդյունավորությունը, այն հավատն ու վրդապետությունը ներշնչեցին ամբողջ հայ ժողովրդի, որ հանձին Մովսես եռամեծ Տաթևացի վարդապետի հայ ժողովուրդը ունի իր ամենամեծ իրավունք և զոհաբերվող յուսավորիչներից մեկին: Ամեն կողմից դիմում էին նրան, որ «Մովսես վարդապետն, սուրբ հայրն մեր, լիցի կաթողիկոս»: Բովանդակ հայ ժողովուրդը, երևելի ազգայիններ և հոգեվորականներ «գրավոր աղաչանքներով» դիմում էին նրան, ու նախորդ կաթողիկոսների անկարգություններից ձանձրացած և Մովսեսի բարեկարգություններից մխիթարված, և սիրով ու հոժարությամբ, կաթոգին սրտով ցանկանում էին, որ նա լինի կաթո-

¹⁹ Առ. Դավրիժեցի, նույնը, էջ 312:

²⁰ Կորյուն, վարք Մաշտոցի, Երևան, 1962, էջ 107:

²¹ Օրմանյան, նույնը, էջ 2342:

դիկոս, «վասն հաստատության հաատոյ և կարգի եկեղեցեաց» (Դավրիժեցի):

Պաշտոնը, այոթը չէ, որ փառավորում է մարդուն, այլ մարդը՝ իր գործունեությամբ փառավորում է իր Աթոռը: Այդպես էլ եղավ նաև պարագան Մովսես Տաթևացու: Նա բազում անգամներ հրաժարվեց այդ բարձր և պատասխանատու, ծանր պարտականությունից, «իրեն անարժան գտնելով առաքելական աստիճանին», — գրում է Դավրիժեցին. բայց եկավ մի պահ, երբ չկարողացավ մերժել կոչման և ծառայության բարձրագույն ջանքը և ստիպված եղավ «պայծառ ու պանծալի ժառանգորդը բարձրագահ Աթոռին ու Էջմիածնի»:

Մովսես Սյունեցին 1629 թվի հունվարի 13-ին բարձրացավ Լուսավորչի Աթոռը: Նրա կարճատև հայրապետության տարիներին (1629—1632) «սինեցաւ համբաւ ազատութեան և նորոգութեան սրբոյ Աթոռոյն յընդհանուր աշխարհ յազգս հայոց» և երեկվան հուսահատ և անտերունչ հայ արտերը լցվեցին «անպատում ուրախութեամբ»:

Մովսես Գ Տաթևացու վերանորոգչական լուսավորչական արտառույ գործունեությունը ժողովրդի մեջ վերահաստատեց հույսն ու վստահությունը դեպի Մայր Աթոռի դերն ու առաքելությունը, դեպի հայ հոգևորականության ծառայության և կոչման ասպարեզը: Տաթևացին հայրապետական նվիրակների նշանակումով ողջ հայության սիրտը կապեց իր Աթոռին: Պետական ֆերմաներով հաստատեց և ապահովեց վանքապատկան ազգիներն ու կալվածները:

Մովսես Գ Տաթևացու աշակերտներն ու գործակիցները՝ հայոց ողջ աշխարհով մեկ և ժամանակի հայ գաղթօջախներում մտցրին կենդանության շունչ, ծավալեցին եկեղեցաշեն և ժողովրդանվեր մեծ գործունեություն, և «հոգեբուխ քարոզությամբ և բարեկրոն վարքով հաստատում էին Քրիստոսի հավատի և եկեղեցական ավանդության կարգ ու կանոնը, ...եկեղեցիներ էին կառուցում, քահանաներ էին կարգում, կործանում էին ճշմարտության հակառակորդներին, ահա թե ինչո՞ւ ճշմարտությունը գորանալով առաջ էր գնում»: (Դավրիժեցի):

Մեծ վերանորոգիչ վարդապետը շատ կարճ ժամանակով միայն կարողացավ մնալ կաթողիկոսական գահի վրա, բայց այն ծածկեց նոր փառքով և անմոռաց եկեղեցանվեր, արտառույ մեծագործություններով:

Երբ Մովսես Գ Տաթևացին իր աչքերը փակեց 55 տարեկան հասակում, երեք ու կես տարվա զահակալությունից հետո (1629 հունվար 13—1632 մայիս 14), Մայր Աթոռի «նորոգության» և «ազատության» աշխատանքը դրված էր ամուր և մնայուն հիմքե-

րի վրա, և ամենքը լցվել էին «անպատում ուրախութեամբ և ի ձայն ցնծութեան գոհանային զԱստուծոյ»:

Սիմեոն մեծագործ Երևանցի կաթողիկոսն իր «Ջամբո» գրքում Մովսես Գ Տաթևացու մասին գրում է.

«Աստուծոյ նախասահմանութեամբն և Հոգւոյն սրբոյ տուչութեամբն առնու զլուսարարութիւն սրբոյ Աթոռոյս»:

«Սա էր այր հոգեբնկալ, առաքելագարդ և բնակարան շնորհաց Հոգւոյն սրբոյ»:

«Սա որպէս թէ ի նորոյ ի հիմանէ նորոգեաց գտորք Աթոռս, պայծառացոյց հոգեւորական կարգօք և մարմնական պիտոյիք»: Սիմեոն Երևանցին շատ բարձր է գնահատում Տաթևացու շինարարությունն ու վերանորոգությունը. «Այլոց հայրապետացն ո՛չ ոքն եղև երախտաւոր և բարեար սրբոյ Աթոռոյս և Ազգիս մերոյ նման տրիին»²²:

Մովսես Գ Տաթևացու աշակերտներից մեկն այսպես է նկարագրում իր ուսուցիչ մեծ հայրապետին.

«Բարքով՝ պարզ, մտքով՝ ազատական, գեղեցկագիր, և փառապանծ դեմքով, վաշելոյշ, միջին հասակով, ներքին և արտաքին մարդը նրա մեջ պայծառ, կարծես ու Սահակ Պարթևն էր, ըստ ամենայնի կրոնական շրնորհներով և փիլիսոփայական գիտությամբ պայծառ»:

Տաթևացին մահացավ 1632 թվականի մայիսի 14-ին, Երևանում, իր սիրած ու Անանիա անապատում և թաղվեց հասարակաց գերեզմանատանը՝ Երևանում, Կոզեբլիի վրա, ուր գտնվում էր նաև Հովհ. Կոզեռն վարդապետի գերեզմանը, և ուր թաղված էր նաև նրա մեծ ժամանակակիցը՝ Մելքիսեթեյ վրդ. Վժանեցին 1631 թվականին:

Մովսես Գ Տաթևացին, «մեծահատատ, սրբասնունդ, մաքրակենցաղ, երկայնամիտ և ողորմած»՝ հոգևորական էր, ազդեցիկ՝ «աստուածաշնորհ վարդապետութեամբ» և իր «քաղցր քարոզութեամբ» իրեն էր գրավում հոգիները, «ուղղելով ի ճանապարհս արդարութեան»²³. (Էջ 239):

«Իր կաթողիկոսությամբ հայ եկեղեցվո համար դարագլուխ մը կկազմե», — եզրակացնում է Օրմանյանը, որովհետև «իրոք այ իրմով կիսակփի այն աղետալի և եղկելի շրջանը», որն սկսվեց Հայրապետական Աթոռի Էջմիածին փոխարդիւնց հետո: Օրմանյանը նշում է, որ հայ եկեղեցին «մեծագույն և բացառիկ պատիվը տվավ Մովսես Գ Տաթևացիին, անոր անունը հիշելով հաճա-

²² Սիմեոն Երևանցի, «Ջամբո», Վաղարշապատ, 1874, էջ 21:

²³ Առ. Դավրիժեցի, նույնը, էջ 312:



Հոգեհանգիստ Առաքել վրդ. Դավրիժեցու գերեզմանի վրա

պագոր պատարագի մեջ, եռամեծ հովվաց և հովվապետաց կարգին, և կցելով զայն ուրիշ լուսավոր անունի մը հետ, և զույգ հիշատակելով Գրիգորի և Մովսիսի Տաթևացեացն անունները»²⁴:

ՓԻԼԻԳՊՈՍ Ա ԱՂԲԱԿԵՅԻ (1633—1655)

Մովսես Գ Տաթևացուն հաջորդում է նրա աշակերտ և գործակից Փիլիպպոս Ա Աղբակեցին:

Դավրիժեցին իր պատմության ին գլուխը նվիրել է Փիլիպպոս Ա Աղբակեցու կյանքին և գործունեությանը, «վասն վարդապետության և կաթողիկոսության տեսուն Փիլիպպոսի, յորում և վասն նորոգության եկեղեցեաց սրբուհի կուսանացն Գալիանեայ և Հոփսիսմեայ»²⁵:

Փիլիպպոս Աղբակեցին ըստ ամենայնի շարունակեց իր մեծ ուսուցչի և նախորդի

«նորոգության» գործը և այն արդյունավորեց ավելի մեծ իրագործումներով:

Դավրիժեցին նշում է, որ Փիլիպպոս Աղբակեցու ջանքերով «քարձրագան Աթոռն Սուրբ Էջմիածին սովաւ առաւել հաստատեցաւ և փարթամացաւ եկեղեցական անօթով, ոսկով և արծաթով և մեծագին զգեստօք, պատուական գրեմօք, վարդապետականօք բազմօք, սոյնպէս և մարմնատօք և սպասիք»²⁶:

Փիլիպպոս Աղբակեցին ծնվել է 1593 թվականին Վասպուրականի Աղբակ գավառի Էրնկան գյուղում: Փոքր հասակից մեծ սեր է ունեցել դեպի վանական կյանքը և 14 տարեկան հասակում դիմել է մեծ Անապատ՝ սովորելու: Սակայն Սարգիս Պարոնտեր եպիսկոպոսը նրան չի ընդունում, «վասն տղայական հասակին և անմօրոք գոյուն»: Ուսումնատենչ պատանին, սակայն, չի հուսահատվում և մեծ Անապատի մերձակայքում ութ ամիսներ «ի մէջ մայրեացն» անցկացնում է իր օրերը, հոգում վառ սեր և երազ՝ ընդունվելու Հարանց մեծ վանքը:

Մեծ Անապատի վանահայր և առաջնորդ Սարգիս Պարոնտեր եպիսկոպոսը, ապա

²⁴ Ժամագիրք, Երուսաղեմ, 1956, էջ 619, նաև Օրմանյան, նույնը, էջ 2421:

²⁵ Առ. Դավրիժեցի, նույնը, էջ 314—345:

²⁶ Նույնը, էջ 342:

խղճահարվելով, 1609 թվականին ընդունում է Փիլիպպոսին, որպես «սու ոռոս աշակերտ», նրա դաստիարակության գործը հանձնում է Մովսես Սյունեցուն:

Փիլիպպոսն այնուհետև իր կյանքն ու գործունեությունն ընդմիշտ կապում է Մովսես Սյունեցու հետ:

Փիլիպպոսը երբ ավարտում է վանական ուսման իր ընթացքը «ճգնողական վարուց և գործոց առաքինության, լրնթերցումն և յուսումն աստուածային գրոց» և հասնում «ի տես երիտասարդության», կուսակրոն քահանա է ձեռնադրվում Մովսես Սյունեցուց: Ապա կատարելագործվելով և խորանալով աստվածաբանական, եկեղեցագիտական և մեկնողական գիտելիքների մեջ, վարդապետական իշխանություն է ստանում նույնպես Մովսես Սյունեցուց:

1630 թվականին Մովսես Սյունեցին, արդեն որպես կաթողիկոս, Փիլիպպոսին եպիսկոպոս է ձեռնադրում:

Փիլիպպոս Աղբակեցին էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովում կաթողիկոս է ընտրվում և 1633 թվականի հունվարի 13-ին օծվում և հաջորդում իր մեծ ուսուցչին:

«Փիլիպպոսը Մովսեսին հաջորդելով նոր քան մը ընելու չձեռնարկեց, այլ յամենայնի և ըստ ամենայնի ջանաց լրացնել Մովսիսի սկսած՝ բայց արագահաս մահուամբ լրացնել չկրցած ձեռնարկները»²⁷:

Փիլիպպոս Աղբակեցին գահակալեց 22 տարի, 1633—1655 թվականներին և Մայր Աթոռում և հայ եկեղեցու պատմության մեջ թողեց հիշատակության արժանի հոգևոր, կրթական, վանական, վերանորոգչական աշխատանքներ:

«Էր յոյժ տօնասէր, պայծառացնող տօնից, զարդարող եկեղեցեաց» (Դավրիժեցի): Կաթողիկոս անձամբ սիրում էր վանական կյանքը ու ապրում ճգնալուրական խստակեցությամբ:

Աղբակեցու առաջին գործն է լինում շարունակել և ամբողջացնել Տաթևացու շինարարական աշխատանքները և վերանորոգումներ կատարել: Հատկապես նա Մայր Աթոռում նախկինում եղած և իր ժամանակի թուրք-պարսկական պատերազմների ընթացքում ավերված ու քանդված փայտաշեն շենքերը փոխարինում է քարաշեն կառույցներով:

«Արդ ի յԱթոռոջս որքան փայտեայ շինուածք գոյին՝ յառաջմանէ ւաւերեցեալք էին, գամենեսեան շինեաց սա և վերստին նորոգեաց»,—գրում է Սիմեոն Երևանցի²⁸:

Այնուհետև նորոգում է Մայր տաճարի տանիքը, ամբողջ Մայր տաճարը, ամստան կոչված քարաշեն սեղանատունը, վանական խուցերը, «քարի, աղիսով և գեղեցիկ յօրինուածովք», նաև երկու ձիթահանք և կատարում այլ շինարարություններ²⁹:

Աղբակեցին հիմնական վերանորոգություններ է կատարում մանավանդ ս. Հովհաննիսի և ս. Գայանէի տաճարներում:

Հայ ճարտարապետության չքնաղ գոհարը՝ ս. Հովհաննիսի տաճարը, լրջորեն վնասված էր և կարիք ուներ արմատական նորոգության: Բայց, գրում է Դավրիժեցին, ս. Գայանէ տաճարը ևս քանդված էր. «ստաւել աւերեալ» էր: Աղբակեցին հիմնական նորոգություններ կատարեց երկու տաճարների վրա էլ «մեծաիղձ կարօտի, ջանի և քաջում գանձս ծախսելով նորոգեաց գեղեցկաշէն ի հիմանց մինչև ցգագաթն գմբէթին»³⁰:

Երկու վանքերում էլ գոյություն ունենալուց դադարել էր միաբանություն, եկեղեցական պաշտամունք: Աղբակեցին տաճարները «նոր ի հիմանց շինեց» և հաստատեց միաբանություն³¹:

Աղբակեցու վանական-նորոգչական աշխատանքները կատարվում են 1652—1653 թվականներին: Նույն տարիներին Աղբակեցին նորոգում է նաև Երևանի ս. Անանիա վանքը՝ իր հարակից շենքերով՝ փայտաշեն վաճառքները փոխարինելով քարաշեն կառույցներով:

Աղբակեցին հատուկ ուշադրություն է դարձնում նաև վանքապատկան այգիներին ու Վաղարշապատի բոլոր արտերը և նաև Արարատյան դաշտը ոռոգելու հարցի վրա: Արագածից բխող ու Ծիրակի դաշտը հոսող հորդառատ աղբյուրի ընթացքը շրջել է տալիս դէպի Քասաղ գետ և ապահովում ջրի մեծ քանակ, ոռոգման կարիքների համար:

Աղբակեցին ոռոգման նպատակներով ավելացնել է տալիս նաև Հրազդան գետի ջրի քանակը, խորացնել տալով Սևանա լճից սկիզբ առնող ակունքը, «մեծաւ աշխատութեամբ և դրամածախսութեամբ» (Զամբո, էջ 23):

Աղբակեցու գործունեության անմոռաց հիշատակներից մեկը Սպահան գերի տարված ս. Գրիգոր Լուսավորչի Աջի պատմական վերադարձն էր Մայր Աթոռ:

1614 թվականին Ծաֆ-Աբասը գերի էր տարել Աջը, էջմիածնի տաճարի 15 նշանավոր քարերի հետ: Աջը գերության մեջ մնաց մինչև 1638 թվականը:

«Մայր Աթոռը,—գրում է Օրմանյանը,—չէր

²⁹ Նույնը, էջ 22:

³⁰ Առ. Դավրիժեցի, նույնը, էջ 326:

³¹ Զամբո, էջ 22:

²⁷ Օրմանյան, նույնը, էջ 2424:

²⁸ Զամբո, էջ 22:

կարող գրկված մնալ իր գլխավոր զարդն ու նվիրական սրբությունն եղող Լուսավորչի Աջն, որ աղբյուրն էր օրհնությանց և կնիքը հայրապետական իշխանության³²։

Ս. Լուսավորչի Աջը Ծախ-Աբասի հրամանով պահ էր դրված Սպահանում՝ խոջա Սաֆարի տանը։ Աղբակեցին գնաց Սպահան և Նոր Ջուղա և բազում դժվարություններով և իր հայրապետական ազդու միջամտություններով, նաև «ստատաձեռն նվերներով» պետական մարդկանց սիրտը շահեց, թագավորական հրամանով կարողացավ ազատել Աջը, այցելեց հայրենագուրկ իր գաղթական հոգևոր գավակներին, միախառնեց, սփռեց։

Մեծ հանդեսով 1638 թվականի սեպտեմբերին, 26-ամյա գերեզարկությունից հետո, ս. Լուսավորչի Աջը վերադարձավ Մայր Աթոռ, ի մեծ ուրախություն հայ ժողովրդի։ «Եղև անպատում ուրախությոն ամենայն Հայոց»,—գրում է Դավրիժեցին, և կատարվում է համաժողովրդական տոն և ցնծություն։

Աջի հետ Մայր Աթոռ են վերադարձվում նաև 1614 թվականին Էջմիածնի Մայր տաճարից տարված 15 քարերը³³։

Ս. Գրիգոր Լուսավորչի Աջի վերադարձը Մայր Աթոռ, մեծացնում է վստահությունն ու խորացնում հարգանքը դեպի Փրիպպոս կաթողիկոսի աճձն ու գործունեությունը, և բոլոր սրտերը կապվում են սիրով ու պաշտամունքով դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը։

Աղբակեցին զբաղվում է նաև կրթական գործով։ Մովսես Տաթևացու օրով Հովհաննավանքում բացված դպրատունը նա նպատակահարմար է գտնում տեղափոխել Էջմիածին՝ իր անմիջական հսկողության և դեկավարության ներքո առնելու համար։

Աղբակեցու օրով Էջմիածնի դպրանոցը ապրում է իր փայլուն շրջաններից մեկը։ Նա կազմում է կայուն ուսումնական ծրագիր ու պլան, հրավիրում է նշանավոր ու գիտական հայ վարդապետներին որպես ուսուցիչ։ Էջմիածնի դպրոցի տեսուչ է նշանակում ժամանակի նշանավոր գիտնական Սիմեոն Ջուղայեցի վրդ.-ին, Մելքիսեթել Վժանեցու տաղանդավոր աշակերտին։ Աղբակեցու քրիստոնեական և կրթական լայնախորհրդյան պայծառ վկայությունն այն փաստն է, որ նա Էջմիածնի դպրանոցի համար հրավիրում է նաև կաթողիկոս Բ. Պողոս Բիրումալուն՝ դոմինիկյան կրոնավորին, որպես «ուսուցիչ օտար լեզվաց և իմաստասիրական գիտությանց»³⁴, թեև Բիրումալին չարդարացրե՞լ լուսամիտ և ազատամիտ հայոց հայրապետի

կրթական հույսերը։ Բիրումալին Էջմիածնի դպրեվանքում ավելի շատ զբաղվում էր կաթողիկ պրոպագանդայով, քան աշակերտության գիտելիքներ ջամբելով։ «Հայոց ծխական և վարդապետական գիրքերը ուսումնասիրելով անոնց մեջեն իր մտքին հարմար վկայություններ կհավաքեր, որպեսզի հայոց եկեղեցին քաղկեդոնական և հոռիմետաղական ցուցնե»³⁵։

Աղբակեցին Մայր Աթոռից դուրս զբաղվում է նաև արևմտահայության, Կ. Պոլսի և լեհահայերի ազգային-եկեղեցական գործերով, ինչպես նաև Մայր Աթոռի և Սսի կաթողիկոսության հարաբերությունների հարցով։

Այս նպատակով նա 1651 թվականին այցելության է մեկնում Երուսաղեմ, Կ. Պոլիս, տեղապահ նշանակելով Հակոբ Ջուղայեցի եպիսկոպոսին։

Աղբակեցին ամեն տեղ, որպես ընդհանրական հայրապետ և ս. Էջմիածնի մեծ վերանորոգիչ, արժանանում է բացառիկ հարգանքի և սրտագին ընդունելության։

Հայոց հայրապետը երբ հասնում է Կարին, օսմանյան իշխանությունները ոչ միայն հոգում են հայոց հայրապետի և նրա շքախմբի անդամների ուղևորության ճանապարհաձախերը, այլև կաթողիկոսի կյանքի պահովության համար՝ բարձրատիպ մի պաշտոնյա «թագաւորական ծառայ ի դրանէ թագաւորին» նշանակում են որպես պահապան, որը երկու տարի ուղեկցում է հայոց հայրապետին, որպեսզի ամեն տեղ նրան ընծայվի պատշաճ հարգանք ու խնամք։

Արևմտյան Հայաստան կատարած իր ուղևորության ժամանակ Աղբակեցին նախ ուխտի է գնում Երուսաղեմ՝ Ս. Հակոբյանց վանքը, մեծ խմբով «վարդապետօք, եպիսկոպոսօք, քահանայիք և ապաստորօք»։

Այս ուղևորության ժամանակ, որպես բարտողար, Աղբակեցուն է ընկերանում նաև Առաքել վրդ. Դավրիժեցին։

Աղբակեցին չորս ամիս մնաց Երուսաղեմում, վայելեց Աստվածատուր պատրիարքի և միաբանության սերն ու Երուսաղեմի քույր եկեղեցիների հոգևոր պետերի հարգանքը։ Ինքն էլ հիշատակներ թողեց Ս. Հակոբյանց վանքում, այն՝ Ս. Հակոբյանց Մայր տաճարի հատակին սալարկը «գեղեցիկ յօրինուածքով և նկարակերտ յարմարութեամբ, երանգ երանգ վիմօք»³⁶։

1651 թվականի մայիսին Աղբակեցին Երուսաղեմում գումարում է մի ժողով՝ եկեղեցական մի շարք ցավոտ խնդիրների շուրջը

³² Օրմանյան, Գույնը, էջ 2434։

³³ Ջամբո, էջ 22։

³⁴ Օրմանյան, Գույնը, էջ 2438։

³⁵ Օրմանյան, Գույնը, էջ 2438։

³⁶ Առ. Դավրիժեցի, Գույնը, էջ 331։

մտածելու և համաձայնության գալու: Ժողովին մասնակցում են Սսի Տ. Ներսես Սեբաստացի կաթողիկոսը, Երուսաղեմի Աստվածատուր Տարոնացի պատրիարքը, ութ եպիսկոպոսներ, 18 վարդապետներ, 35 աբեղաներ, 60 քահանաներ և բազում այլ իշխաններ՝ շուրջ 1000 հոգի:

Ժողովում սահմանվում են 13 կանոններ, որոնցով երկու Աթոռների միջև սեր և միաբանություն հաստատելուց հետո, վերջնականորեն սահմանագծվում են Մայր Աթոռի ընդհանրական Հայրապետության և Սսի տեղական, մասնավոր կաթողիկոսության վարչական իրավասության սահմանները Արևմտյան Հայաստանում և Թուրքիայում, մեր եկեղեցական կանոնների լույսի ներքո:

Երուսաղեմի ժողովում սահմանված սերն ու միաբանությունը դառնում են կանոն Մայր Աթոռի և մեր նվիրապետական մյուս Աթոռների հետագա հարաբերությունների համար, թեև մերթ ընդ մերթ Սսի կաթողիկոսները հետագայում էլ փորձում են ոտնձգություններ անել այս կանոնի դեմ:

Փիլիպպոս Աղբակեցին Երուսաղեմից անցնում է Կ. Պոլիս: Պատրիարքարանը ընկել էր ծանր պարտքերի ներքո: Պատակովել էր նաև ժողովուրդը: Աղբակեցին իր բարձր հեղինակությամբ կարողանում է մեղմել կրքերը, հանգանակությամբ վճարել պարտքերը, քարոզում բոլորին սեր և համերաշխություն և ամրապնդում հայ եկեղեցու միասնությունն ու միությունը Մայր Աթոռի շուրջ և 1653 թվականի ամռանը վերադառնում Մայր Աթոռ:

Աղբակեցին Էջմիածին էր վերադառնում լավատես, նաև Մայր Աթոռի հետագա շինարարությունների համար նյութական մեծ միջոցների բարիքներով:

1654 թվականին, երբ արդեն ավարտվել էին ա. Հոփսիմե և ս. Գալանե տաճարների վերանորոգչական աշխատանքները, Աղբակեցին ձեռնամուխ է լինում իր վաղուց փափայած գործին՝ հայ ճարտարապետության չքնաղ գարդ Մայր տաճարի մեծ զանգակատան շինությանը, իշխանաւան նվիրատվությամբ կ. պոլսեցի Անտոն Զեյեպի:

1654 թվականին, բուն Բարեկենդանի օրը, Աղբակեցին խանդավառ մթնոլորտում կատարում է զանգակատան հիմնարկերը՝ հակառակ Երևանի Մահմադ Դուլի խանի արգելքին:

Շինարարությունը շարունակվում էր նաև 1655 թվականին. «Բարձրագույն շենքն, մինչև կապեօան ներքին կամարքն» (Դավրիժեզի): Աղբակեցին անհամբեր սպասում էր զանգակատան շինության ավարտին: Բազ մեծ հայրապետին վիճակված չէր տեսնել «սառմանալի արուեստի, յոքնագան նկարակեր-

տություն քանդակեալ ի վէմս» իր վերջին մեծագործության ավարտը:

Աղբակեցին 1655 թվականի մեծ պահքին, Դատավորաց կիրակիին, 63 տարեկան հասկում վախճանվում է և թաղվում ա. Հոփսիմե տաճարում, աջակողմյան դասի մեջ:

Դավրիժեցին իր պատմության մեջ, ամփոփելով Փիլիպպոս Աղբակեցու արդյունալի կյանքի և բեղմնավոր գործունեության նկարագիրը, եզրակացնում է: Աղբակեցին «էր այր կարի խորհրդական, հանճարեղ, աշխարհաշէն և արդիւնարար», թե՛ վարդապետության և թե՛ իր կաթողիկոսության տարիներին անդադար և անխափան մեծ գործեր կատարեց, մանավանդ «բարձրագահ ս. Էջմիածնի Աթոռի» համար, հոգևոր, քարոչական տեսակետներից, որովհետև նա «ի գիրս աստուածային սրամիտ էր և նրբաբնին, ի խրատու և ի քարոզս համեղաբան»: Նա մեծ գործ կատարեց նաև Հայոց աշխարհի համար. «Բազմագան կերպի հոգևոր և մարմնաւոր արդեանք օգտակար լինէր աշխարհին, զի իբրև գեղդ ամուր էր նա», հայոց ազգի համար, «ընդդէմ մահմեդականաց, որք ոչ կարէին ի հարստահարել և ի զգուել զհայս», վասնզի հայ ժողովրդի և եկեղեցու թշնամիները, որոնք «նման էին հզոր լեռների, բոլորն էլ խորտակվեցին և մեջտեղից վերացան, իննեն դրանք եկեղեցական թե աշխարհիկ, օտարներ թե այլազգի փառավոր իշխաններ»³⁷:

«Փիլիպպոսի գործունեությունը տարածվեցավ ամեն նյութերու վրա: Մայր Աթոռին ներքին կարգերը, վանական կանոնները, եկեղեցական ծեսերը, քարոչական կենցաղը, իրմով ստացան իրենց հիմնական վերանորոգումը: Երուսաղեմի Աթոռին պայծառությունը, Կիլիկիո խնդիրին լուծումը, Կ. Պոլսո շփոթությանց հանդարտությունը, Լեհահայոց կնճիոհն վերցվիլը, իր վարչական արդյունքներն եղան: Մայր Աթոռին, մերձավոր վկայություններուն, բազմաթիվ վանքերուն, և վիճակային եկեղեցիներուն շինությունները իրմով քաջալերվեցան և լրացան»³⁸:

«Մեծ եղավ նաև իր համբավն ու ազդեցությունը, և եղած էր արգոյաւոր և մեծաշուք առաջի ամենայն ազանց, Հայոց, Հռոմոնց, Վրաց, Օսմանցոց, Պարսից և մեծամեծ իշխանաց, նաեւ թագաւորաց իսկ: Մեծ քարոզիչ եղավ, և բոլոր կյանքին մեջ անխափան վարեց իր վարդապետական կոչումը...»³⁹:

³⁷ Առ. Դավրիժեցի, նույնը, էջ 342:

³⁸ Օրմանյան, նույնը, էջ 2486:

³⁹ Օրմանյան, նույնը, էջ 2486:

Դավրիժեցիին իր պատմության մեջ, «Վասն նորոգութեան անուանի վանօրէից և շինութեան բազմաձախ և մեծավայելոյ եկեղեցեաց» գլխում⁴⁰ խոսում է նաև Մովսէս Գ Տաթևացու և Փիլիպպոս Աղբակեցու օրով բազում այլ անվանի վանքերի նորոգության և փառավոր եկեղեցիների շինության մասին, որոնք նույնպես հանդիսացան ամուր կովան ԺԷ դարի մեր հոգևոր, մշակութային վերազարթոնքի:

Սույն հոդվածը չձանրաբեռնելու համար չենք խոսում այդ վանքերը և եկեղեցիները վերանորոգելու աշխատանքների մասին: Հետաքրքրվողները կարող են կարդալ Դավրիժեցու պատմության 346—353 էջերը:

ՀԱԿՈԲ Դ ԶՈՒՂԱՅԵՑԻ (1655—1680)

Դավրիժեցիին իր պատմության մեջ առանձին գլուխ չի հատկացրել Փիլիպպոս Աղբակեցու հաջորդ Հակոբ Դ Զուղայեցու կյանքին ու գործունեությանը, ինչպես այդ արել է Մովսէս Գ Տաթևացու և Փիլիպպոս Աղբակեցու համար, թեև իր պատմությունը հասցրել է մինչև 1662 թվականը, երբ արդեն շուրջ յոթ տարի գահակալել էր Զուղայեցին:

Այնուամենայնիվ, Դավրիժեցիին երեք պարագաներում հիշատակում է իր պատմության մեջ Հակոբ Զուղայեցու գահակալության առաջին շրջանի դեպքերից հետևյալները. Դարաշավիի ս. Ստեփանոս Նախավրկայի վանքի «խաչանման» եկեղեցու շինությունը «սրբատաշ վիմօք, վերամբարձ կաթողիկէի, գեղեցկաշէն և զանազան արուեստակեալ նկարակերտութեամբ զարդարեալ»⁴¹: Ապա Աղբակեցու սկսած Մարտանարի հույակերտ մեծ զանգակատան շինության ավարտը: Զուղայեցին փիլիպպոսաշէն զանգակատան մեջ կառուցում է նաև ս. Հրէշտակապետաց անուանով մի սեղան: 1658 թվականի սեպտեմբերի 12-ին, Խաչվերացի տոնին, գրում է Դավրիժեցիին, մեծ հանդիսությամբ «օրհնեցին» զանգակատան գագաթի խաչը, «քակեցին զիսկալէն», այսինքն՝ շինության ծառայող լաստակառույց կազմածը⁴²:

Այնուհետև, Դավրիժեցիին հիշում է, որ ինքը Փիլիպպոս կաթողիկոսի մահից հետո իր պատմությունը գրել և ավարտել է 1662 թվականին Հակոբ Զուղայեցու հրամանով (Դավրիժեցի, էջ 617):

Վերոհիշյալ գործերից բացի, Հակոբ Դ Զուղայեցու անունը սերտորեն կապված է, տարբեր մակարդակի վրա, Մայր Աթոռի

պայծառության ա՛յլ աշխատանքների հետ, ինչպիսիք են՝ հայ տպագրության արվեստի զարգացման ի նպաստ Զուղայեցու թափած ջանքերը, նրա անմիջական հսկողության և թելադրության ներքո հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրությունը Ամասերդամում, 1666 թվականին, Մայր Աթոռի միաբան Ռսկան վարդապետ Երևանցու ջանքերով, նրա գործունեությունը՝ Կ. Պոլսում, Երուսաղեմում ամրապնդելու համար մեր եկեղեցու ներքին խաղաղությունն ու միասնությունը, պաշարը՝ կաթողիկոսականությունների դեմ և ապա հայ ազատագրական շարժման սկզբնավորությունն ու հովանավորությունը, նրա օրով:

Հակոբ Զուղայեցու գործունեությունը ավելի լայն հորիզոններ էր ընդգրկում և հետապնդում էր նույնքան կարևոր ազգաշեն և եկեղեցանվեր հեռանկարներ:

Հակոբ Դ Զուղայեցին, ըստ ամենայնի, ո՛չ միայն շարունակեց Մովսէս Գ Տաթևացու և Փիլիպպոս Աղբակեցու՝ իր մեծ նախորդների վերանորոգչական, հոգևոր, կրթական, շինարար աշխատանքները, այլ նաև ավելի բարձր մակարդակի վրա նա ծավալեց տարբեր բնույթի եկեղեցաշէն և հայրենանվեր գործունեություն:

Հակոբ Դ Զուղայեցու անունը սերտորեն կապված է Մայր Աթոռի երկու մեծ վերանորոգիչների՝ Մովսէս Գ Տաթևացու և Փիլիպպոս Աղբակեցու գործունեության հետ: Ահա թե ինչու, քաղելով Դավրիժեցու, Սիմեոն Երեմյանցու, Զաքարիա Սարկավագի և Օրմանյանի աղբյուրներից, անհրաժեշտ ենք համարում խոսել համառոտակի նաև Հակոբ Դ Զուղայեցու մասին, ամբողջացնելու համար ԺԷ դարի Մայր Աթոռի «Նորոգութեան» նվիրված երեք հայրապետների գործունեության պատկերը, ըստ Դավրիժեցու:

Զուղայեցին ծնվել է հին Զուղայում 1598 թվականի մարտին: Ծահ-Աբասի բռնազաղթի օրերին եղել է 6—7 տարեկան: Նախնական կրթությունը ստացել է Ամենափրկիչ վանքում և ապա իր ուսումը կատարելագործել Էջմիածնի դպրոցում, մանավանդ Մելքիսեթեկ Վժանեցու և Սիմեոն վարդապետ Զուղայեցու ձեռքի տակ:

Զուղայեցին իր վարդապետական և եպիսկոպոսական աստիճանը ստանում է Փիլիպպոս Աղբակեցուց, Էջմիածնում, և դառնում նրա գործակիցն ու աջակիցը:

1655 թվականի ապրիլի 8-ին ս. Էջմիածնում գումարված ժողովը Հակոբ Զուղայեցուն ընտրում է կաթողիկոս. «Եւ լաջորդեաց զկնի նորա (Փիլիպպոսի—Ա. Հ.) Սուրբ Էջ-

⁴⁰ Ա. Դավրիժեցի, նույնը, էջ 346—353:

⁴¹ Առ, Դավրիժեցի, նույնը, էջ 347:

⁴² Նույնը, էջ 342:

միածնի Ջուղայեցի Յակովբ վարդապետն»⁴³:

Ջուղայեցին զահակալում է մինչև 1680 թվականը և Մայր Աթոռը դնում է իր պատմական, հոգևոր, կրթական, հայրենասիրական առաքելության բարձրության վրա:

Ջուղայեցու զահակալության առաջին փայլուն հաջողությունը լինում է Մայր տաճարի զանգակատան շինության ավարտումը, հակառակ Երևանի խանի արգելքին և սպառնալիքին: Սակայն, վկայում է Դավրիժեցին, «Աստուած պահեաց զզանգակատուն և զխանն քակեաց»: Ջուղայեցին իր բարձր հեղինակությամբ, այցելություններով, «չխնայելով նաև ոսկին և արծաթը, հաջողեցավ 1657 հուլիսին, Փիլիպպոսի մահվրեն երկու տարի ետքը, զանգակատունը լրացնելու հրաման ստանալ»⁴⁴:

Այնուհետև Ջուղայեցին անձամբ մեկնում է Պարսկաստան, իր կաթողիկոսության արքունի հրովարտակը բտանում և ձեռք է բերում նաև վանքապատկան գյուղերի արտոնագրեր. «Հառ զմեր գեղջ վեց դնակ մուլքն վերստին սաստիկ հրամանագրովք»⁴⁵:

Մայր Աթոռում ապա նա ծավալում է շիրարարական բեղուն գործունեություն: Զբաղվում է վանքապատկան հողերի և դաշտերի և առհասարակ Վաղարշապատի ոռոգման հարցերով: Վաղարշապատի և Մայր Աթոռի ջրային կարիքների համար կառուցել է տալիս երեք ջրամբար-լճակներ, «ծովակա», ստորերկրյա հորերի ջրերի օգտագործմամբ և ապա ջրաղացներ և «գդինկրա», այսինքն՝ ձալարածեծոց:

Հակոբ Ջուղայեցու հիմնական ծրագիրն էր՝ **հայ ժողովրդի հոգևոր, մտավոր լուսավորությունն ու քաղաքական ազատությունը**:

Այս ուղղությամբ Ջուղայեցու երկրորդ կարևոր գործը եղավ «հայկական տպագրության համար ունեցած հոգածությունը»⁴⁶: Ջուղայեցին մտածում էր տպարան հիմնել Մայր Աթոռում: Սակայն այդ տարիներին մեր երկրում տիրող դաժան պայմաններն արգելք հանդիսացան լուսամիտ կաթողիկոսի ձեռնարկի հաջողությանը:

Հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության մեծ գործը, արդարորեն կապվում է լուսամիտ Հակոբ Դ Ջուղայեցու անվան հետ:

Ոսկան վարդապետ Երևանցին 1666 թվականին Ամստերդամում հայերեն Աստվածաշունչը տպում է «մեծի հրամանի իշխողի և Վեհափառ կաթողիկոսի և պատրիարքի հայ-

կազեանս սեռի... քրիստոսահիմնեցելոյ սրբոյ Էջմիածնի տեառն Յակոբոս»:

Հակոբ Ջուղայեցին, Ոսկան վարդապետի միջոցով, գլուխ է բերում Մայր Աթոռում կազմված «մի ամբողջ հրատարակչական ծրագիր» (Լեո): Ոսկան վարդապետը այդ հրատարակչական ծրագրի համաձայն, Ամստերդամում, ա. Էջմիածնի անվան տպարանում տպում է 39 անուն գիրք, որի մեջ նաև՝ Առաքել վարդապետ Դավրիժեցու պատմությունը, 1669 թվականին, 650 էջ⁴⁷:

Հակոբ Ջուղայեցու օրով հատկապես մեր ազգային-եկեղեցական կյանքը Սսում, Երուսաղեմում, Կ. Պոլսում և Լեհաստանում պառակտվել էր. հանդես էին եկել անջատողական, կենտրոնախույս ձգտումներ՝ Եդիսաքար Այնթապցու և Սսի Խաչատուր Գ. կաթողիկոսի կողմից. նաև ներքին անկարգություններ, պայքարներ, որոնք տկարացրել էին մեր եկեղեցին և ազատ ասպարեզ բացել՝ կաթողիկական ուղեգրությունների և քարոզության համար: Արգելված էր որևէ հոգեվորականի մուտքը Էջմիածնից Կ. Պոլիս: Արևմտյան Հայաստանում և հատկապես Կ. Պոլսում ազգն ու եկեղեցին տագնապի մեջ էին: Կ. Պոլսի Մարտիրոս Կաֆացի պատրիարքը, «առաջնորդք, իշխանք և ժողովուրդ երկրին», Պոլսում ժողով են գումարում և Հակոբ Ջուղայեցուն շտապ հրավիրում Կ. Պոլիս՝ կրքերը խաղաղեցնելու, ազգային-եկեղեցական կյանքում կարգ ու կանոն, ներքին խաղաղություն ու միասնություն վերահաստատելու և «առ ի հոգավ վասն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի»⁴⁸:

1665 թվականի զարկանը Ջուղայեցին ճանապարհվում է Զմյուռնիա, Երուսաղեմ և ապա Կ. Պոլիս և, մինչև 1667 թվականը մնալով այնտեղ, կարողանում է իր հաշտարար ոգով, բարձր հեղինակությամբ, իմաստությամբ և խոհականությամբ լուծել բոլոր հարցերը, վերահաստատել հայ եկեղեցու ծոցում ներքին միասնականությունը, սանձել կաթողիկոսների ուղեգրություններն ու դավադրությունները՝ հայ եկեղեցու և հայ ժողովրդի դեմ, և բոլոր սրտերը համախմբել եկեղեցու շուրջ, ազգային գերագույն շահերի բարձր ըմբռնումով:

Ջուղայեցին Կ. Պոլսում իր առաքինի վարքով ու կենցաղավարությամբ, իր խոհականությամբ գրավում է նաև սուլթանի համակրանքն ու վստահությունը և, Կ. Պոլսում վերականգնելով Մայր Աթոռի հեղինակությունն ու իրավունքները, վերադառնում Մայր Աթոռ:

⁴³ Առ. Դավրիժեցի, նույնը, էջ 345:

⁴⁴ Օրմանյան, նույնը, էջ 2510:

⁴⁵ Զամբո, էջ 24:

⁴⁶ Օրմանյան, նույնը, էջ 2510:

⁴⁷ «Էջմիածին» ամսագիր, 1966, №№ ԺԱ—ԺԲ, էջ 157—158:

⁴⁸ Զամբո, էջ 25:

Հակոբ Զուղայեցու օրոք հայ ժողովուրդը և մեր եկեղեցին հեծում էին պարսկական դաժան լծի ներքո, իրավագուրկ, կեղեքված ու անարգված:

Զուղայեցին մտածում է այդ ծանր օրերին նաև հայ ժողովրդի ազգային-ազատագրության մասին:

1678 թվականին նա էջմիածնում հրավիրում է խորհրդակցական բնույթի գաղտնի ժողով՝ այդ հարցով զբաղվելու համար:

Ժողովին մասնակցում են վեց բարձրաստիճան հոգևորականներ և վեց իշխաններ կամ մելիքներ:

Շարժման ղեկավարներից մեկն էր նաև ծերունի Պողոս իշխանը, որը թեև ժողովին ներկա չէր, բայց ուղարկել էր որդուն՝ Իսրայել Օրուն, որը հետագայում հանդիսացավ հայ ազգային-ազատագրական շարժման մեծ գործիչներից մեկը:

Էջմիածնի ժողովը որոշում է՝ Եվրոպա ուղարկել մասնավոր պատվիրակություն՝ Հակոբ Դ Զուղայեցու՝ հայրենասեր կաթողիկոսի գլխավորությամբ և Իսրայել Օրուն ընկերակցությամբ:

1679 թվականի ղեկոնախնդրի պատգամավորությունը մեկնում է Էջմիածնից Կ. Պոլիս, Թիֆլիսի վրայով. «անշուշտ, վրաց իշխաններում հետ ալ տեսակցելով»⁴⁹, և խորհրդակցություն է ունենում Գեորգի XI թագավորի հետ «ազատագրական ծրագրի ուղղությամբ»: (Հայ ժող. պատմ., Երևան, 1951, էջ 291):

Հակոբ Դ Զուղայեցին տեսակցություններ, խորհրդակցություններ է ունենում Կ. Պոլսում, խորհրդապահաբար, կարևոր և հայրենասեր մի շարք եկեղեցական և աշխարհական ազդեցիկ անձնավորությունների հետ, գործնական քայլեր առնելու համար:

Հակոբ Դ Զուղայեցին ութ ամիս մնում է Կ. Պոլսում և որոշում է անցնել Եվրոպա: Բայց այդ չի հաջողվում նրան: Հայոց հայրապետը հիվանդանում է և 82 տարեկան հասակում, 1680 թվականի օգոստոսի 1-ին, մահանում Կ. Պոլսում, թաղվում՝ Բերայի հասարակաց գերեզմանատանը՝ մեծ հուսահատություն պատճառելով հայ ժողովրդին:

Կաթողիկոսի մահից հետո նրան ընկերակցող պատվիրակությունը հուսահատ վերադառնում է Մայր Աթոռ: Միայն Իսրայել Օրուն է շարունակում իր անապարհը դեպի Եվրոպա:

Զուղայեցին արդարորեն համարվում է ԺԷ դարի հայ ազատագրական շարժման ռահվիրան:

Օրմանյան սրբազանը հետևյալ ձևով է ամփոփում Հակոբ Դ Զուղայեցու կյանքն ու գործունեությունը:

«Հակոբ Զուղայեցին նախանձահույզ եկեղեցական և նախանձախնդիր հայրապետ մը լինելով հանդերձ, իր մտադրությունը կսկսե՛ր ոչ միայն կրոնական և կրթական բարեկարգությանց վրա, այլ ուշադրություն կդարձնե ազգին ապագային վրա, և անոր կենցաղական և քաղաքական վիճակն ալ իր ջանքերուն առարկա կընե»⁵⁰:

Առաքել վրդ. Դավրիժեցու մահվան 300-ամյակի առթիվ ոգեկոչեցինք հայրենասեր պատմիչի հիշատակը և նրա **պատմության** միջոցով անդրադարձանք նաև Մայր Աթոռի մեծ վերանորոգիչների՝ Մովսես Գ Տաթև-վացի, Փիլիպպոս Աղբակեցի և Հակոբ Զուղայեցի հայրապետների եկեղեցաշեն ու հայրենակներ, հոգևոր, կրթական, դաստիարակչական «արդիւնաբար» գործունեությանը: Նրանք ծանր ու դաժան պայմաններում, նահատակության հասնող զրկանքներով, իրենց անձնուրաց գործունեությամբ, առաքինի և օրինակելի կենցաղով, իրենց հավատով ու նվիրումով, վանական շինարարությամբ, դպրանոցների բացումով, փառավոր և անմոռաց սխրանքի նոր էջեր ավելացրին մեր եկեղեցու և ժողովրդի պատմության մեջ՝ արժանանալով հայ սերունդների երախտագիտությանն ու սիրուն:

Ս. Էջմիածինը ոչ միայն ժամանակագրական «պատմություն» էր Դավրիժեցու և մեր եռամեծ վարդապետների համար, այլև մանավանդ ոգի, խորհուրդ, պատգամ ու ապրում և համազգային սրբավայր, որի լույսին ու խորհրդին մեջ վերածնվում, ամբողջանում և գեղեցկանում է հայ ժողովուրդը որպես եկեղեցի և հոգևոր-բարոյական հավաքականություն:

Այս մտածումների լույսի ներքո ս. Էջմիածինը ոգեղեն վեմն է մեր ազգային գիտակցության և արժանապատվության:

Իզուր չէ, որ անցյալում հայությունը այս իսկ պատճառով անվանվել է նաև **«Էջմիածնա ազգ, Էջմիածնա ժողովուրդ»**: Ահա թե ինչու, Առաքել վարդապետ Դավրիժեցին իր պատմությունը գրելիս որպես հոգեվոր, ազգային դավանանքի արտահայտություն պատգամում էր արդարորեն և հպարտությամբ:

«Ի վերայ Աշոց և Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան»:

Այս է սրտագին համոզմունքը ողջ հայ ժողովրդի, երե՛կ, այսօ՛ր և հավիտյա՛ն:

⁴⁹ Օրմանյան, նույնը, էջ 2611;

⁵⁰ Օրմանյան, նույնը, էջ 2619: